

## ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ԾՆՆԴԵԱՆՆ՝ ԵՐԵԿՈՅ

«Փանօք ի բարձունս Աստուծոյ»:

Ղուկ. Բ. 14:

Ծննդեան երեկոյ է, փոքրիկ վերջին մոմերը զեռ վառուում են տօնածառի վերայ, երեխաները խաղում են իրենց ստացած նոր խաղալիքներով, ամէն բան կամաց կամաց խաղաղուում է, պարզևաբաշխութիւնը վերջացած է: Բայց արդեօք ծննդեան մասին մեր ունեցած յիշողութիւններն ևս բոլորովին վերջացան: Ամէն ինչ կրկին նոյն ընթացքով պիտի գնայ, մինչև դարձեալ ծննդեան մոմերը նորից կվառուին: Միթէ մեր ներքին ամբողջ ոգևորութիւնը նման է տօնածառի կարճատև փայլին: Միթէ տօնից յետոյ մենք դարձեալ պիտի ընկղմուենք մեր սովորական քրիստոնէական հանդիսա կեանքի մէջ, որի մասին առհասարակ հազիւ թէ մէկն ասէ, թէ արդեօք այդ քրիստոնէութիւն անուանել կարելի է: Թէ՞ որ և է բան մեզ պակաս է մնում: Եւ եթէ մի բան պակաս է մնում, հարց է ծագում, ի՞նչ է այդ պակասը:

Մի խոր տպաւորութիւն է թողնում մեզ վերայ այդ տօնը, այն՝ որ մենք քրիստոնեաներս մի եղբայրութիւն պէտք է կազմէինք: Քրիստոսի աղքատիկ մտուրը մեզ չի թողնում բոլորովին հանդիսա առնել: Մենք լսեցինք՝ եկեղեցում երգում էին, «Նա աղքատ ծնուեց, որպէս զի մեզ վերայ զթայ և երկնքում մեզ հարստացնէ ու իւր հրեշտակներին հաւասար զարձնէ»: Ահա այս սէրն է ս. ձրագալոյցի պարզեր, որ մենք մինչև մեր հոգու խորքն զգում ենք: Յիսուս, ամենից աւելի եղբայրական, մարմնացեալ սէրը ծնուել է: Նա հարիւրաւոր տարիներ առաջ է ծնուել և երբէք չի մեռնում: Սէրը կենդանի է և բաղխում է մեր սրտերը, թէ արդեօք մենք ներս կընդունենք նրան: Այսօր

ծննդեան տօնը դարձեալ մեզ հարցնում է, կամեն՞ում էք Աստուծոյ թաղաւորութեան, սիրոյ և փրկութեան դաշխնքին պատկանել:

Արդեօք ցանկան՞ում ենք մենք: Այո, Տէր, մենք անշուշտ կցանկանք, բայց մեզ համար այդ շատ դժուար է: Մենք փորձեցինք քս սէրը մեր կեանքի մէջ հաստատել և միշտ էլ դրա առաջ մեր մեծ անգօրութիւնը տեսանք: Ո՞րտեղ և ի՞նչպէս պէտք է սկսել ճշմարիտ սիրոյ օրէնքը գործադրել: Ոմանք փորձ են անում այդ սիրոյ սկզբունքը գործ զննել անհատներին կատմամբ, և այն ժամանակ հասկանալի է դառնում, թէ ի՞նչքան բան է հարկաւոր ուրիշներին վերաբերութեամբ ևս այդ սկզբունքը գործ զննելու համար: Մակայն անհատներից զատ, որոնց մենք սիրել կցանկանայինք, հազարաւորները կան, տժգոյն և հոծ բազմութեամբ, խեղճ մարդիկ, խեղճ հոգով: Արդեօք դու նրանց ևս սիրում ես: Թէ նրանց վերայ ուշք չես դարձնում: Մի՞թէ այդ բազմութիւնը քեզ համար չէ: Ի՞նչպէս կարելի է սակայն բազմութեանը սիրել: Պէտք է մարդ նրան բարկութեան թէ համբերութեան մէջ սիրէ: Պէտք է մարդ նրա դէմ կռուի, թէ նրան վշտակից լինի: Կամ գուցէ երկուսն էլ միաժամանակ հնարաւոր է: Ի՞նչ է առհասարակ ընդհանուր քրիստոնէական մարդկային սէրը: Արդեօք այդ մի ճշմարտութիւն է, թէ համեստ մարդիկ են միայն այդպէս մտածել: Ո՞վ Տէր մեր Փրկիչ, որ Դու սիրուց զբողած աշխարհ ես գալիս, և նոյն սիրուց զբողած պէտք է լսաչ բարձրանաս, գթան մեզ վերայ և ս. Ծննդեան օրը գործնականապէս սովորեցրու մեզ այն, որի մեծ ուսուցիչը Դու ես: Տէր, սովորեցրու մեզ սիրել:

Եթէ մենք ճշմարիտ սէր ունենայինք, այն ժամանակ երկրիս վերայ մենք խաղաղութեանը մօտիկ կլինէինք: Որտեղ կենդանի սէրը գոյութիւն ունի, այնտեղ է նաև ներքին անձնական խաղաղութիւնը, որովհետև այնտեղ չկայ այն աւերը, որ գործում են հոգու մէջ նախանձն ու ատելութիւնը: Ով ճշմարտապէս սիրում է, նա հաւատում է Աստծուն, որովհետև մարդ իւր կեանքը կորած չէ համար

բում: նա մի նպատակ, մի պարտք ունի, նա բախտի և արկածներէ խաղալիք չէ: Ով Քրիստոսի սիրոյ բովանդակութիւնը հասկանում է, նա իւր մէջ ձեռք է բերում դրանով արդէն հրեշտակներին ձայնակցելու խելամուտթիւնը. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն»: Նա այս աշխարհի երկրային լող ունայնութիւնից վեր է բարձրանում: Այդ անասկ անձիւք սակայն մարդկային ընկերական կեանքի, առաւել լաւ վիճակի կարապետներն են: Նրանց դէպի Աստուած և դէպի մերձաւորն ունեցած սիրուց բղխում է ճշմարիտ քրիստոնէութեան մի այնպիսի հոգի, որ ինչպէս երկարականութիւն մէկից միւսին է անցնում, ծնողներից որդուց մէջ է հոսում, և այնուհետեւ էլ գործելով, մարդկային շատ քաբացած սրտեր փափկացնում է և շատ ուրախ աւետիքներ տալիս: Մենք սովորում ենք հաւատալ ս. Ըննդեանն այն պատճառով, որ աշխարհիս ամենայեալին և ամենաաղքատ որդուց սէրն անգամ անօգուտ չէ խաղաղութիւնը երկրին մօտեցնելու համար: Այս խաղաղութիւնը, դէպի որն իւրաքանչիւր մի կրծքի տակ խորին աննշանք է նիրհած, առանց կռուի ձեռք չի բերւում, և նա չի գալիս միանգամից, բայց չկայ մէկը ոչ երկնքում և ոչ երկրիս վերայ, որ նրան ծառայել չկարողանայ, եթէ միայն ցանկանայ:

Նաումանից թարգմ. Արսակ վարդապետ.

### ԱՄՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԵԱԼԸ

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զմրդին իւր Միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս»: Յովհ. Գ. 16.

Հրեշտակներն եկան Բեթղեհէմի հովիւների մօտ և աւետեցին նրանց. «Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Գաթի» (Ղուկ. Բ. 11): Այս աւետումով սկիզբը դրուեց փրկութեան ժամանակաշրջանի: Ինչ որ նախնի հայրերի ամենաբարձր ցանկութիւնն ու անն-